Համաձայն
Վարչության 09.11.2023թ. որոշման՝
Ուժի մեջ է մտնում 17.11.2023 թվականից

AMIO – ԲԻԶՆԵՍ ԷՔՍՊՐԵՍ

Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին բիզնես քարտով տրամադրվող օվերդրաֆտների պայմաններն ու սակագները (սեփական ռեսուրսներով)

1	**Պայմաններ**	
1.1	Արժույթ	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո
1.2	Տարեկան անվանական տոկոսադրույք	ՀՀ դրամ՝ 16% ԱՄՆ դոլար՝ 14% ԵՎՐՈ՝ 12%
1.3	Ժամկետ	1 տարի
1.4	Մարման եղանակ	Օվերդրաֆտի մայր գումարի ամսական հավասարաչափ մարում և հաշվեգրված տոկոսների ամենամսյա մարում
1.5	Օվերդրաֆտի առավելագույն չափ մեկ կամ մի քանի բիզնես քարտերի համար մեկ վարկառուի գծով	Նվազագույնը՝ 500,000 ՀՀ դրամ կամ համարժեք ԱՄՆ դոլար, Եվրո, առավելագույնը միջին ամսական զուտ կրեդիտային շրջանառության[1] 50%-ի չափով, բայց ոչ ավելի, քան 4.000.000 ՀՀ դրամ կամ համարժեք ԱՄՆ դոլար, Եվրո
1.6	Վաղաժամկետ մարման տույժ, տուգանք	Չի կիրառվում
1.7	Լրացուցիչ պայման	Օվերդրաֆտը տրամադրվում է բիզնես քարտերի միջոցով
2	**Բանկի միջնորդավճար**	
2.1	Դիմում-հայտի ուսումնասիրության միջնորդավճար	Չի կիրառվում
2.2	Սպասարկման միջնորդավճար	1%
2.3	Բիզնես քարտի սպասարկման տարեկան վճար	Համաձայն բիզնես քարտերի համար Բանկում գործող սակագների
2.4	Կանխիկացման միջնորդավճար	Համաձայն բիզնես քարտերի համար Բանկում գործող սակագների
2.5	Միջոցների անկանխիկ փոխանցման միջնորդավճար	Համաձայն բիզնես քարտերի համար Բանկում գործող սակագների
3	**Ապահովվածություն**	
3.1	Գրավի առարկա	1. Հաշիվներում առկա և հետագայում մուտքագրվող դրամական միջոցների պահանջի իրավունք, 2. Իրավաբանական անձ հաճախորդների դեպքում՝ 10% և ավելի բաժնեմաս ունեցող սեփականատերերից որևէ մեկի և/կամ տնօրենի անձնական երաշխավորությունը, Անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ վերջինիս ընտանիքի անդամ[2] չհանդիսացող որևէ մեկի անձնական երաշխավորություն
4	**Վարկառուի նկատմամբ պահանջներ**	
4.1	Վարկառու	ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերեր

[1] Միջին ամսական կրեդիտային շրջանառությունը եռամսյակային կամ տարեկան կտրվածքով հաշվարկված գումարներից առավելագույնն է:

[2] Ընտանիքի անդամ են հանդիսանում հայրը, մայրը , երեխաները, ամուսնու հայրը, ամուսնու մայրը, քույրը, եղբայրը:

4.2	Վարկառուին ներկայացվող պահանջներ	• Առնվազն 6 ամսվա անընդմեջ գործունեություն, • Ժամկետանց պարտավորությունների բացակայություն (ներառյալ տրամադրված երաշխավորությունների գծով). • Նախորդ 12 ամիսների ընթացքում վարկային պարտավորությունների գծով ընդհանուր ուշացրած օրերի քանակը չպետք է գերազանցի 24 օրը (ներառյալ տրամադրված երաշխավորությունների գծով), ընդ որում, եթե կորպորատիվ հաճախորդի փաստացի գործունեության ժամկետը 1 տարուց պակաս է, ապա վարկային պարտավորությունների գծով ժամկետանց օրերի քանակը չպետք է գերազանցի փաստացի գործունեության օրվանից սկսած յուրաքանչյուր ամսվա համար 2 օրը՝ կուտակային սկզբունքով. • Հաճախորդը Բանկում պետք է սպասարկվի առնվազն 3 ամիս և Բանկում վերջին եռամսյակի կտրվածքով միջին ամսական զուտ կրեդիտային շրջանառությունը պետք է կազմի նվազագույնը 5,000,000 ՀՀ դրամ. • Հաշիվների վրա կալանքի բացակայություն:
5	**Երաշխավորի նկատմամբ պահանջներ**	
5.1	Երաշխավոր	ՀՀ-ում գրանցված իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերեր
5.2	Երաշխավորին ներկայացվող պահանջներ	• Առնվազն 6 ամսվա անընդմեջ գործունեություն ծավալած իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր և 21-63 տարեկան ֆիզիկական անձ. • Ժամկետանց պարտավորությունների բացակայություն (ներառյալ տրամադրված երաշխավորությունների գծով). • Նախորդ 12 ամիսների ընթացքում վարկային պարտավորությունների գծով ընդհանուր ուշացրած օրերի քանակը չպետք է գերազանցի 24 օրը (ներառյալ տրամադրված երաշխավորությունների գծով), (եթե Երաշխավորի գործունեության ժամկետը 1 տարուց պակաս է, ապա վարկային պարտավորությունների գծով ժամկետանց օրերի քանակը չպետք է գերազանցի փաստացի գործունեության օրվանից սկսած յուրաքանչյուր ամսվա համար 2 օրը՝ կուտակային սկզբունքով):
6	**Լրացուցիչ պայմաններ**	
6.1	**Մինչ 31.10.2023թ. ներառյալ տրամադրված դրամական պարտավորությունների դեպքում՝** • Ժամկետանց տոկոսների գծով Բանկը Վարկառուից գանձում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար ժամկետանց գումարի 0,13%-ի չափով, • Դրամական պարտավորությունը պայմանագրով նախատեսված ժամկետներում չմարվելու դեպքում պայմանագրով նախատեսված տոկոսների հաշվարկը դադարում է և այդ օրվանից ժամկետանց գումարի նկատմամբ մինչև ժամկետանց պարտքի փաստացի կատարման օրը հաշվարկվում են տոկոսներ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով, **01.11.2023 թվականից տրամադրված դրամական պարտավորությունների դեպքում՝** Բանկն իրավունք ունի՝ • Ժամկետանց վարկի նկատմամբ շարունակել կիրառել Պայմանագրով նախատեսված տոկոսի հաշվարկումը: • Կիրառել տույժ՝ ժամկետանց տոկոսագումարի և ժամկետանց գումարի նկատմամբ 0.13%-ի չափով ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար:	